«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՀԱՄԵՍՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ 3-ՐԴ ՀԻՄՆԱԿԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ Ա.ԱՆՏՈՆՅԱՆ

Արմավիր 2022թ.

Բովանդակություն

- Ներածություն……..……..…3
- Ստեղծագործական գործունեության տեսակի չորս մեթոդները….5
    1. Ստեղծագործության պատկերների բանավոր վերարտադրում……..……7
    2. Թատերական գործունեություն……..8
    3. Նկարչական գործունեություն……14
    4. Երաժշտական ստեղծագործական գործունեություն…….16
- Եզրակացություն ……18
- Գրականության ցանկ……..19

Ներածություն

Մոտ քառասուն տարի անընդմեջ դասարան եմ մտնում: Դասարան եմ մտնում սրտի թրթիռով՝ համոզված լինելով, որ ինձ սպասում են: Դժվարությունները տանելի են, եթե սիրով ես մտնում դպրոց: Մենք ականատես ենք լինում երեխաների բոլոր տեսակի հուզումներին՝ լինի դա տխրություն, ուռախություն, ցավ, ամոթ վիշտ, վախ, հիասթափություն, թե հրճվանք: Երեխայի հոգեվիճակը կարող է ամեն վայրկյան փոփոխվել: Անվերջ ու անսահման է ուսուցչի սերը: Ներել ու սիրել, սիրել ու սպասել, սպասել և ոգևորել: Այս երկար տարիների ընթացքում ես ո'չ միայն սովորեցրել, այլ նաև սովորել եմ: Դասարան եմ մտել մշտապես մտածելով այն կիրառելի մեթոդ հնարների մասին, որոնք պետք է զարգացնեն սաներիս ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը:

Կյանքի, գիտության, տեխնիկայի ու մշակույթի հարաճուն զարգացմանը զուգընթաց՝ դպրոցն էլ անընդհատ զարգանում ու կատարելագործվում է: Զարգանում ու կատարելագործվում է նաև ուսուցիչը՝հնարավորին չափով ներդաշնակ դառնալով կյանքի հետ: Չի կարելի կառչել հնին միայն նրա համար, որ այն ավելի ծանոթ ու հասկանալի է մեզ, կամ նրա գործադրումն ավելի հեշտ ու մատչելի է և մերժելի նորն ու արդիականը, կամ հրաժարվել նրանից, միան նրա համար, որ այն մեզ քիչ է ծանոթ, կամ նար գործադրումն ավելի դժվար ու անսովոր է:

Բնական է, որ գիտատեխնիկական բուն առաջընթացի պայմաններում դպրոցը կոչված է սովորողին զինելու նորանոր գիտելքներով, իսկ դա պահանջում է մշտապես կատարելագործվել բոլոր առումներով: Այդ ի սկ պատճառով պետք է սովորողի մեջ դաստիարակել նորանոր որակներ:

Շատ կարևոր է տարրական դասարանի աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված ուսուցչի աշխատանքը:

Անհրաժեշտ է սովորողների մեջ դաստիարակել այնպիսի որակներ, որոնք անմիջաբար առնչվում են ստեղծագործական գործունեությանը: Դրանք են՝ դիտողականություն, շփվողականություն, հնարամտություն, ծուլությունը, դժվարությունները հաղթահարելու կամք, լավ մարզված հիշողություն,

իրողությունները իմաստավորելու և համակողմանի վերլուծելու սովորույթ և մշակույթ: Նմանատիպ կարողություններ կարելի է ձևավորել և զարգացնել լեզվական, ստեղծագործական խաղերի, տարբեր մրցույթների, վիկտորինաների, ցերեկույթներրի միջոցով: Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակությունները կարելի է զարգացնել մի շարք մեթոդների ու հնարների միջոցով:

Միշտ ստեղծագործ լինել՝ նշանակում է լինել ամենակարող:

Չկա ավելի լավ ապագայի համար ավելի ապահով երաշխիք , քան ամեն անգամ ստեղծագործելու ունակություն, անհրաժեշտության դեպքում, ցանկացած պահի լինել պատրաստ, որոշել խնդրահարույց հարցեր և մշակել նոր հասկացություններ:

Մարկ Ֆիշեր

Ստեղծագործական առաջադրանքների հաջորդական կիրառումը ՝ պարզից բարդ սկզբունքով

Ստեղծագործական կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում երեխայի ստեղծագործական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ գրական ստեղծագործական գործունեության մեջ: Կրտսեր դպրոցականների ստեղծագործելու գործընթացի հիմնական դժվարությունը պայմանավորված է գրավոր և բանավոր խոսքի ոչ ճիշտ կառուցմամբ և բառապաշարի աղքատությամբ: Այս հարցերում ուսուցիչը պետք ՝ խելամտորեն միջամտի:

Ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով հարկավոր է.

- Սովորողների մեջ դաստիարակել այնպիսի որակներ, որոք անմիջապես առնչվում են ստեղծագործական գործունեությանը և որոշում դրա արդյունավետությունը: Միևնույն ժամանակ ստեղծագործական հակումներ արթնանում են զգայական հարուստ ներաշխարհով, հրապուրվելու ունակության, երևակայության և ճանաչողական հետաքրքրությունների զարգացածության բարձր մակարդակ ունեցող անձանց մոտ :
- Պայմաններ ստեղծել անհատականության դրսևորման ու անձի ինքնաարտահայտման համար: Երբ երեխան որևէ ներկայացման մեջ ստանձնում է տվյալ հերոսի դերը, նա յուրովի է արտահայտում ընտրված կերպարի զգացմունքները: Երևակայությամբ որոշակի դրվագներ պատկերելով, նա իրացնում է իր անձնական ընկալումը և վերաբերմունք դրսևորում տվյալ հերոսի կամ իրադարձության հանդեպ: Այդ գործողությունների պարբերական ու հետևողական կրկնությունները կուտակում են հուզական ու իմացական փորձ և ձևավորում համապատասխան մշակույթ: Դրանք ի հայտ են գալիս նաև գրքի ընթերցանության, ներկայացման կամ ֆիլմի մասին կարծիքներ արտահայտելու ընթերցածի վերաբերյան նկարաշարի ստեղծման ընթացքում:
- Երեխաներին դրդել ճանաչողական գործընթացում կիրառել հետազոտական գուծունեության տարրեր:

Ըստ պետական չափորոշչի՝ տարրական դպրոցի շրջանավարտն ի թիվս այլ կարողությունների և հմտությունների պետք է ունենա նաև գեղագիտական ընկալում և ստեղծագործական տարրական կարողություններ:

ա. Զբաղվի անահատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ՝ նկարել, ծեփակերտել, երգել, նվագել, հանդես գալ բեմադրություններում:

բ. Նկարչական միջոցներով, երևակայական պատկերներով արտահայտի գաղափարներ

գ. Ունենա և արտահայտի սեփական կարծիք արվեստի ստեղծագուրծությունների վերաբերյալ

դ. Հաճույք ստանա ստեղծագործական աշխատանքից և հաճույքով դրանք ցուցադրի:

Չափորոշչային այս պահանջներն իրականացնելու և ցանկալի արդյունքի հասնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ: Դրանք են՝

1. ***Աշակերտի դերի փոփոխություն.*** նա պետք է դառնա նորի ճանաչման գործընթացի ակտիվ մասնակիցը, ով հնարավորություն ունի ընտրություն կատարելու և իր հետաքրքրություններն ու պահանջմունքները բավարարելու:
2. ***Հոգեբանական բարենպաստ մթնոլորտ***. այստեղ իշխում են բարիդրացիական հարաբերությունները:
3. ***Ներքին դրդապատճառներ.*** Դրանց առկայությամբ է հնարավոր ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը:
4. ***Աշակերտներին չափավոր օգնության ցուցաբերում.*** Անհրաժեշտ է օգնություն ցույց տալ աշակերտներին, սակայն ոչ մի դեպքում չի կարելի երեխայի փոխարեն անել այն, ինչ նա կարող է անել:
5. ***Դասի ընթացքում աշխատանքի բազմազան ձևերի.*** Խմբային, անհատական,ֆրոնտալ, ներդաշնակ համակցում:
6. ***Միջառարկայական կապերի պահպանում .*** Ստեղծագործական խնդիրների լուծման ընթացքում անհրաժեշտ է կիրառել տարբեր բնագավառներից ձեռք բերված գիտելիքները: Եվ որքան դժվար է խնդիրը, այքնան շատ գիտելիքներ պետք է կիրառել այն լուծելու համար:
7. ***Հաջողության իրավիճակի ստեղծում.*** ստեղծագործական բնույթի առաջադրանքներ անհրաժեշտ է հանձնարարել ամբողջ դասարանին: Չի կարելի համագործակցել միայն առավել օժտված երեխաների հետ: Այդ աշխատանքների կատարման ընթացքում պետք է խրախուսել բոլորին:
8. ***Առաջադրանքների խելամիտ ընտրություն .*** Դրանք լինելու են բարդ, բայց միաժամանակ աշակերտների ներուժին համապատասխան և պետք է

նպաստեն ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրության աճին:

9. ***<u>Ստեղծագործական առաջադրանքների բազմազանություն</u>***. Դրանք պետք է լինեն բազմազան ինչպես իրենց բովանդակությամբ և ձևով, այնպես էլ բարդության աստիճանով:

<u>Ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող հնարների պարբերական և համակարգված կիրառություն</u>. Պահանջվող առաջադրանքների ոչ հաճախակի, դեպքից դեպք, կատարումը չի նպաստի սովորողների ստեղծագործական գործունեության ակտիվացմանը:

Ըստ ստեղծագործական գործունեության տեսակի կարելի է առանձնացնել 4 խումբ մեթոդներ և հնարներ՝

1. ստեղծագործական պատկերների բանավոր վերարատադրում
2. թատերական գործունեություն
3. նկարչական գործունեություն
4. երաժշտական ստեղծագործական գործունեություն

Ստեղծագործական պատկերների բանավոր վերարատադրում

Գեղարվեստական տեքստերի շուրջ աշխատանքի ընթացքում արդյունավետ է ստեղծագործական ընթերցանության հնարի կիրառումը: Այդ ժամանակ տեղի է ունենում յուրօրինակ համագործակցություն ընթերցողի և տեքստի հեղինակի միջև:Երեխաները տեքստի շուրջ կատարում են բազմազան ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք էլ նպաստում են ընթերցածի վերլուծությանը և ստեղծագործաբար ինքնաարտահայտվելու կարողությունների զարգացմանը: Կարդալու ժամանակ երևակայական պատկերների ստեղծումն ընթերցողի ստեղծագործական ակտիվության արդյունքն է: Ստեղծագործական ընթերցանությունը բարձր գեղարվեստական ճաշակի ձևավորման հիմքն է: Այն արթնացնում է աշակերտների հետաքրքրասիությունը: Գրական ստեղծագործությունը պահանջում է բառի հնարամիտ կիրառման և դրա գեղագիտական իմաստների բացահայտման արվեստ: Ուստի առաջին դասարանից սկսած պետք է աշակերտներին հանձնարարել առաջադրանքներ՝ գեղարվեստական երկերում հաճախակի օգտագործվող բառերի, դրանց նշանակության և ձևի վերաբերյալ: Բառի գեղարվեստական հնարավորությունների բացահայտման նպատակով երեխաները կատարում են հատուկ ստեղծագործական բնույթի առաջադրանքներ: Նրանք պետք է պատասխանեն առաջին հայացքից տարօրինակ թվացող հետևյալ հարցերին. ի՞նչ տրամադրություն եմ ունենում, երբ լսում եմ

աղմուկ, շրշյուն, թրթիռ բառերը, ի՞նչ եմ զգում կամ պատկերացնում, երբ լսում եմ ալիք բառը : Առաջին դասարանից երեխաներին հարկավոր է սովորեցնել ոչ միայն գրագետ պատասխանել հարցերին, այլև կազմել հարցեր տրված տեքտի շրջանակում: Այս աշխատաքը նպաստում է գլխավորը երկրորդականից տարբերելու կարողությունների ձևավորմանը: Երեխաները կարող են կազմել այնպիսի հարցեր, որոնք ենթադրում են և' մանրամասն և' կոնկրետ՝ այո, ոչ պատասխաններ:

Չորրորդ դասարանից արդեն երեխաներին դուր է գալիս ընթերցածի վերաբերյալ թեստ կազմելու աշխատանքը, երբ պահանջվում է երեք պատասխաններից ընտրել միակ ճիշտը:

Ստեղծագործական առաջադրանքների համակարգում հատուկ տեղ է գրավում *խառնաշփոթ* բառախաղը: Առանձին թերթիկների վրա գրվում են առած- ասացվածքներում օգտագործված բառեր՝ առանց միջբառային տարածքների կամ կետադրության: Երեխաները պետք է խառնաշփոթ շարքից ընտրեն այն բառերը, որոնց միջոցով հմնարավոր է ստանալ ծանոթ ասացվածքը:

Միավորիր առաջադրանքի պահանջն է երկու առարկայի զուգակցմամբ կազմել որքան հնարավոր է շատ նախադասություններ՝ օրինակ քանոն-գիրք, գլխարկ-կամուրջ, արդուկ-ավտոբուս և այլն: Նախադասությունները պետք է լինեն անսովոր և ծիծաղելի: Սովորողների ստեղծագործելու ցանկությունն ակտիվացնելու լավագույն միջոց է առած-ասացվածքների շուրջ կազմակերպվող աշխատանքը:

1. Խմբով հորինել որևէ պատմություն, որի գլխավոր իմաստը համապատասխանի տրված ասացվածքի գաղափարին:
2. Ընտրել հեքիաթներ, առակներ, պատմվածքներ, որոնց համապատասխանում է տրված առած-ասացվածքը:
3. Որոշել, թե առած-ասացվածքներից որին է համապատասխանում տրված հեքիաթի կամ առակի իմաստը:

Թատերական գործունեություն

Խաղ-ներկայացում

Սովորողների ստեղծագործական ներուժի դրսևորմանը նպաստելու, բառի գեղագիտական ընկալման հանդեպ հետաքրքրություն զարգացնելու նպատակով՝ կիրառվում է հետևյալ խաղը. Յուրաքանչյուր աշակերտ պետք է վերարտադրի այս կամ այն կերպարը, դրսևորելով ստեղծագործական ձիրք և յուրատիպ ձևով ներկայացնի հեղինակի ասելիքը: Ըստ աշակերտների ակտիվության և ինքնուրույնության կարելի է առանձնացնել տվյալ խաղի տարբեր տարրատեսակներ.

- ✓ Նկարազարդման վերլուծություն՝ դրանում ներկայացված հերոսների դիմախաղի արտահայտչականության տեսանկյունից:
- ✓ Ստեղծագործության ընթերցում դերերով՝ նախապես բանավոր նկարագրելով հերոսների հագուստները, դիմախաղը ,շարժուձևը և այլն:

- ✓ Որևէ ստեղծագործության կենդանի պատկերների ստեղծում: Առաջադրվում է առավելագույնս ճշգրիտ ներկայացնել հերոսների դիրքը և դիմախաղը: Ներկայացված պատկերների մեջ ընտրվում է ամենահաջողվածը:
- ✓ Ներկայացման սցենարի կազմում և դեկորացիաների, հագուստի բանավոր նկարագրում:

Կարելի է կիրառել *թատրոն էքսպորտ* հնարը: Այս հնարի կիրրառման ընթացքում երեխաներից չի պահանջվում հատուկ նախապատրաստում: Սովորաբար այս աշխատանքը կարելի է սկսել "Շաղգամը " հեքիաթի բեմականացումից, քանի որ այդտեղ հերոսները չեն խոսում: Երեխաներին բաժանվում են հեքիաթի հերոսների դիմակները, բաշխվում են դերերը: Կադրից դուրս ձայնով հնչում է հեքիաթը, իսկ դերասանները կատարում են այն ինչ ազդարարվում է : Աշխատանքի այս ձևն օգնում է երեխաներին վստահել իրենց ուժերին:

Հեքիաթները բեմականացվում են նաև տիկնիկների միջոցով: Երեխան իր խաղով կենդանացնում է տիկնիկին:

Արտաստվոր խաղ-ներկայացում . սովորական խաղ-ներկայացման ժամանակ դերերը խաղարկվում են ըստ որոշակի սցենարի: Անսովոր խաղ-ներկայացումը երեխաներին հնարավորություն է ընձեռում ազատ ինքնարտահայտվելու: Այն թույլ է տալիս վերափոխել հեքիաթը և խաղալ այնպես, ինչպես հուշում են սեփական երևակայությունը, փորձը և հույզերը: Այս տիպի բեմականացում կարելի է՝ կազմակերպել ըստ հետևյալ առաջադրանքների.

1. Ներկայացրու տիկնիկը կորցրած աղջկան, նա ամենուրեք փնտրում է իր տիկնիկին, բայց ոչ մի կերպ չի կարողանում գտնել.

-Ինչ որ մեկը տեսե՞լ է իմ տիկնիկին:

2. Մարմնավորիր նապաստակին, որը շատ է ուրախանում, երբ տղան իրեն գազար է տալիս:
3. Մարմնավորիր կատու և շուն, որոք չարացած միմյանց են նայում:
4. Կերպավորիր փոքրիկ մուկիկի, որը կատվից վախենում է:

Ստեղծագործական դասերի ընթացքում երեխաներն ընտրում են հեքիաթը և դերային խաղով ներկայացնում մի դրվագ այդ հեքիաթից:

Կարելի է կիրառել ներկայացման նախապատրաստման հետևյալ քայլաշարը

1. Նյութի ընկալում, որը պետք է ցուցադրվի դերային խաղի միջոցով:
2. Ստեղծգործության վերլուծությյուն:
3. Խնդիրների առաջադրում. ի՞նչ է անհրաժեշտ հաղորդել ցույց տալով տվյալ ներկայացումը:
4. Արտահայտչական միջոցների ընտրություն. ինչպե՞ս դա անել:
5. Փորձեր:
6. Ամսփոփիչ ցուցադրում:
7. Արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Հետաքրքիր աշխատանք է դերերով ընթերցանությունը, որն ուղեկցվում է զգայական վիճակի, հերոսների բնավորության, նրանց ձայնի, հնչերանգի վերլուծությամբ:

Դերերով ընթերցանություն կարելի է իրականացնել բոլոր այն ստեղծագործություններին վերաբերող աշխատանքի ընթացքում, որոնցում առկա է երկխոսություն:

Ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված դասերի կարևոր փուլերից մեկը երեխայի դիմախաղի և շարժուձևի մշակումն է: Հաջողության հասնելու համար կիրառվում է մնջախաղ, որի ընթացքում երեխան արտահայտում է իր զգացմունքները: Այստեղ երևում է և այն, թե ինքն ինչքանով է ընկալել կերպարը:

Երեխաները շատ են սիրում մատիկներով խաղը: Այս խաղի նպատակն է ցույց տալ մատների արտահայտչական հնարավորությունները, սովորեցնել առանց վախենալու գործողություններ կատարել դրանցով, ստեղծել ցանկացած ստեղծագործության հերոսների մինի կերպարներ՝ ներդաշնակեցնելով խոսքն ու շարժումները և ցուցադրել տարբեր զգայական կերպարներ: Խաղի ընթացքում կիրառվում են արտասովոր խաղային առարկաներ՝ օրինակ փոքրիկ թենիսի գնդակներ, որոնց մեջ կարելի է անցք բացել և փակցնել մատիկներին:

Նման մի աշխատանք կատարեցինք մեր դասարանում: Տեխնոլոգիայի դասաժամին պատրաստել էինք գեղեցիկ թաթմաններ հեքիաթի տարբեր հերոսների կերպարներով: Մոտենում էր Ամանորը: Մեր դասարանի աշակերտները այդ հանդեսին մասնակցեցին իրենց իսկ պատրաստած թաթմաններով: Մեկը գորշ Արջուկն էր, մյուսը՝ Նապաստակը, երրորդը՝ Ալարիկ, չորորրդը՝ Դալարիկը, հաջորդը՝ Գայլն ուՆուրին, Հուռին ու Գորտը և այլն: Յուրաքանչյուր դերի համար հորինել էի կամ մեջբերել գեղեցիկ քառատողեր: Նրանք իրենց քառատողերով շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքեր հղեցին մասնակիցներին: Միջոցառումը շատ յուրօրինակ էր: Երեխաները մեծ ոգևորությամբ կատարեցին իրենց դերերը և արժանացան ծնողների ծափահարություններին:

***

Ես Միլ խոզուկն եմ,
Կուզեմ լինեք քիչ խոխոռան,
Կլինեմ ձեր սեղաններին,
Խոզությունն ու ծուլությունը
Կուղեկցեմ ձեզ ամբողջ տարին,
Թող ձեզանից հեռու մնան:

Շնորհավոր Ամանոր:

***

Ես ճստճստան մկնիկն եմ
Ու գալու եմ մյուս տարի:
Շնորհավոր Նոր տարի:

Գալդ լինի միշտ բարի
Սեղանները լի, առատ,
Հայոց մրգով անարատ:

***

Ես Սաթ տիկնիկն եմ հայկական՝ բարի, գործունյա,
Հագիս տարազ է հայկական,
Մաղթանք եմ հղում տոնական:

***

Լեվ շնիկն եմ
Ինձ պատրաստել է Լևոնը բարի
Ու անվանել է ի պատիվ իրեն:
Շնորհավորում եմ ձեր Նոր տարին,
Մաղթում որ տարին բարեհաճ լինի:

***

-Ես Ալարիկն եմ,
-Ես Դալարիկը:
-Չեմ սիրում օճառ, չեմ սիրում ես ջուր
-Դրա համար էլ ձեռքերդ կեղտոտ ու միշտ փոշոտ են:
Դեմքդ լվա, Ալարի'կ, որ ամոթ չասենք:
-Խոստանում եմ, Դալարի'կ, մաքուր կլինեմ:
Առավոտ վաղ դպրոց գնամ, միշտ տասեր բերեմ:
-Ապրես, եղբա'յր իմ, եղբայր Ալարիկ,
Քեզ հավատում է քույրդ Դալարիկ:

***

Փափուկ պոչ ունեմ ու լավ ախորժակ

Շատ խորամանկ եմ,

Երբ նեղն եմ ընկնում,

Իսկույն պոչիս եմ ես վկա բերում:

***

Ես գազան եմ թաթս ծուռ Մեղրից խելքս գնում է,

Ու քայլում եմ շուռ ու մուռ Ողջ ձմեռն էլ քնում եմ:

Շնորհավոր, շնորհավոր Ամանոր/

Դիդակտիկ խաղերը, ինչպես պնդում են հոգեբանները, խաղային գործունեության գլուխգործոցներն են, դրանք միշտ հետաքրքրել են երեխաներին: Այդ ընթացքում երեխաները ցուցաբերում են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանում է նրանց երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները: Բացի դրանից խաղային իրավիճակը նպաստում է, որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր դերը և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար: Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը:

Խաչբառերի կազմում: Ստեղծագործական աշխատանքի առավել արդյունավետ տեսակ է ընթերցած տեքստի բառահումքի շուրջ խաչբառերի կազմումը: Այն նպաստում է երեխաների հետաքրքրության բարձրացմանը, զարգացնում է նրանց դիտողականությունը, հարստացնում բառապաշարը:

Վիկտորինաների կազմում: Ընթերցված ստեղծագործության շուրջ վիկտորինաների կազմումը օգնում է, որ աշակերտները ստեղծագործության բովանդակության նկատմամբ լինեն առավել ուշադիր և դառնան խոհուն ընթերցողներ: Նրանք ձգտում են ստեղծագործություններն ընթերցել, որքան հնարավոր է ուշադիր, որպեսզի վիկտորինաների մեջ ընդգրկեն առավել բարդ հարցեր և կարողանան պատասխանել ընկերների կազմած վիկտորինայի հարցերին:

Ստեղծագործության վերաբերյալ գովազդի, հեքիաթային հայտարարությունների ստեղծում:

Ստեղծագործական աշխատանքը ներառում է մի բաղադրիչ, առանց որի երբեմն հնարավոր չէ առաջ գնալ: Դա երևակայաության գործադրումն է: Ստեղծագործական կարողությունների ակտիվացման համար մեծ նշանակություն ունեն խաղային պահերը, որոնք հետաքրքրություն են մտցնում ստեղծագործական

գործընթացում: Խաղի մի տեսակ է տվյալ ստեղծագործության վերաբերյալ գովազդային վահանակի ստեղծումը: Այն կարելի է անցկացնել մրցույթի ձևով /ու՞մ գովազդն է ամենատպավորիչը/:

Ստեղծագործական հետաքրքիր աշխատանք է հեքիաթների վերաբերյալ հայտարարությունների, նամակների և հեռագրերի կազմումը: Այն երեխայից պահանջում է գրական ստեղծագործության բովանդակության առավել խոր ընկալում: Գրական ստեղծագործության լիարժեք ընկալմանն ու ստեղծագործական երևակայության զարգացմանը նպաստում են նաև գրական խաղերը:

Արդյունավետ է գիտելիքների կրկնությունը կամ տեքստի վերարտադրումն իրականացնել Բարձունքի նվաճումը խաղի միջոցով: Գրատախտակի մոտ են թիմերի ներկայացուցիչները: Նրանք իրենց ճիշտ պատասխաններով բարձրանում են բուրգի աստիճաններով, որը նկարված է գրատախտակին: Բարձունքն առավել շուտ նպաստող թիմը դառնում է հաղթող: Գիտելիքների ստուգման համար կիրառվում է իր ծավալով և թեմայով առավել բարդ Գրական ֆուտբոլ խաղը: ԴԱսարանը բաժանվում է երկու խմբի՝ հարձակվողներ և պաշտպանվողներ: Հարձակվողները հարցեր են հղում, պաշտպանները՝ պատասխանում: Յուրաքանչյուր սխալ պատասխան համարվում է գոլ: Ստեղծագործության փոխակերպումներ խաղի ընթացում տրվում են հետևյալ հարցերը՝նկարագրիր գլխավոր հերոսի բնավորությունը մինչ հանդիպումը և հանդիպումից հետո: Վերարտադրիր տեքստի բովանդակությունն այնպես, որ բարի հերոսները դառնան չար և հակառակը: Պատմիր հեքիաթի բովանդակությունը՝ ավելացնելով նոր կերպար:

Նկարչական գործունեություն

Նկարչական ստեղծագործական գործունեությունը ենթադրում է հետևյալ պահանջների կատարումը

1. Տրված հատվածի, հերոսի, նկարաշարի պատկերում
2. Հատվածի, ստեղծագործության կամ հերոսի տրամադրության պատկերում
3. Նկարաշարի կազմում
4. Ապլիկացիա, ծեփում, գրքի մակետի պատրաստում, նկարիչների նկարազարդումների դիտարկում և քննարկում
5. Նկարային պլանի կազմում

Գույների միջոցով երեխան հեշտությամբ է արտահայտում իր վերաբերմունքը հերոսների, տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Այսպես ստեղծվում է ինքնաշեն գիրք: Որևէ դրվագի նկազարդումը երեխաների կողմից տեքստի բովանդակության զգայական ընկալման խորհրդանիշն է:

Աշակերտները իրենք ստեղծագործում են հանելուկները, կատարում համապատասխան նկարազարդումներ՝հուշելով պատասխանները: Նրանք իրենց փոքրիկ գրքույկներն են կազմում և դառնում նկարիչ ստեղծագործող: Ահա այդպիսի օրինակներ աշակերտների հորինած հանելուկներից և նկարազարդումներից:

***

Նրբահասակ, երկնասլաց
Ես մի ծառ եմ ձեզ ծանոթ,
Իմ կատարին բույն է հյուսում
Արագիլը երկարատ:

***

Ծառից ժպտում է միրգը հայկական,
Ինքը ձվածիր, կուտն անուշահամ:

***

Դե ասացե՛ք, ի՞նչ միրգ է դա,
Երբեք համից չեն կշտանում,
Երբ հյուրերն են Հայաստանում:
Ձեր սեղանին դառնում է չիր,
Դառնում անուշ ալանի:

***

Կլորվում եմ վտանգից,

Դառնում փշե գնդակ,

Թշնամին եմ օձերի,

Երբեք չեմ մտնում վանդակ:

Դառնում փշե գնդակ

,

***

Ծաղկից հյութ եմ քաղում,

Անուշ մեղր պատրաստում:

Ժրաջան աշխատում եմ

Ծույլին էլ փեթակիցս վանում:

***

Շատ եմ սիրում ճահիճ ու ջուր,

Կռկռում եմ միշտ բարձր ու սուր:



Ստեղծագործելով զարգանում է երեխայի տրամաբանությունը, երևակայությունը, հարստանում է բառապաշարը, դառնում է նախաձեռնող

Արդյունավետ է տվյալ ստեղծագործության բովանդակության շուրջ նկարաշար կազմելու մեթոդը: Այն կիրառվում է տարբեր նպատակներով: Չէ որ

նկարաշարի ընդհանուր իմաստը տեքստի հաջորդական շարադրանքն է՝ նկար դրվագներով: Նկարաշարի պատկերումը կարող է կրել առավել ստեղծագործական բնույթ, եթե երեխաներն ինքնուրույն ընթերցեն ստեղծագործությունը, այնուհետև այդ տեքստի բովանդակությունն ինքնուրույն ներկայացնեն նկարաշարի ձևով: Յուրաքանչյուր խումբ ստեղծելով առանձին դրվագներ, գիտի, որ ինքը կատարում է ամբողջ կոլեկտիվի ընդհանուր աշխատանքի մի մասը, հետևաբար առաջադրանքի նկատմամբ ցուցաբերում է պատասխանատու վերաբերմունք: Պատրաստի դրվագային նկարները փակցվում են գրատախտակին ըստ դեպքերի զարգացման հաջորդականության և քննարկվում երեխաների կողմից:

Աշխատանք նկարազարդման շուրջ

Այս աշխատանքը տարրական դասարաններում սկսվում է ծավալով փոքր մանկական գրքերի նկարազարդումներից և նկարների վերլուծությունից: Որպեսզի սովորողներն առավել խորությամբ ընկալեն հերոսի զգայական վիճակը՝ կատարում ենք հետևյալ առաջադրանքը. փորձեք անել այնպես, ինչպես պատկերված է նկարում: Ի՞նչ զգացիք, պատմե՛ք: Նկարազարդման նկատմամբ ուշադրության կենտրոնացումը նպաստում է երևակայության զարգացմանը, գեղարվեստական ճաշակի ձևավորմանը: Այս աշխատանքը կառուցվում է հետևյալ քայլաշարով՝

1. Պարզաբանել, թե ստեղծագործության որ մասն է նկարազարդված
2. Ո՞ր պահն է պատկերված
3. Ընթերցել այն բառերը, որոնք համապատասխանում են նկարազարդմանը
4. Տեքստի ո՞ր մասերի նկարազարդումները չկան
5. Ի՞նչ կարող ենք նկարել

Այսպես նկարազարդման շուրջ աշխատանքը կարող է սահուն կերպով վերածվել բառային նկարչության, երբ երեխան բառերով նկարում է ստեղծագործության պատկերները: Բառային նկարչության ուսուցումն արդյունավետ է սկսել դրվագային նկարների ստեղծումից: Պետք է հիշել, որ բառային նկարներն անշարժ են, այստեղ հերոսները չեն շարժվում, չեն խոսում: Նրանք ասես սառել են ինչպես լուսանկարում և ո'չ թե էկրանի վրա: Տարբեր դրվագների բառային նկարչությունը կատարվում է հետևյալ հերթականությամբ

ա) առանձնացվում է դրվագը բառային նկարազարդման համար

բ) նկարվում է վայրը, որտեղ պետք է տեղի ունենան իրադարձությունները

գ) պատկերվում են գործող անձինք

դ) ավելացվում են անհրաժեշտ մասերը

ե) ներկվում են ուրվագծված պատկերները

Երաժշտական ստեղծագործական գործունեություն

Երաժշտական կերպարները կարող են արտացոլվել ցերեկույթների երաժշտական ձևավորման մեջ, հերոսների համար մեղեդի ընտրելիս, երաժշտական երկխոսություններում, ձայների արտաբերման ընթացքում: Երաժշտական ստեղծագործական գործունեություն ծավալելու նպատակով կիրառվում են հետևյալ հնարները՝ ունկնդրում և երաժշտական ձևավորման քննարկում, մեղեդու հորինում՝ տվյալ բանաստեղծության բառերով, երաժշտության միջոցով հերոսների բնավորության ներկայացում, երաժշտական երկխոսությունների ստեղծում:

Եզրակացություն

Այսպիսով՝ սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները իրականացվում են մշտապես՝ աստիճանաբար բարդացնելու սկզբունքով: Նկատի են առնվում և՝ տեքստերը, և՝ սովորողների ինքնուրույնության աստիճանը, և՝ ստեղծագործական կարողությունների մակարդակը:

Աշակերտների ստեղծագործական գործունեության կազմակերպման հարցում շերտավորումն արդյունավետության տեսակետից ենթադրում է տարրաբնույթ աշխատանքներ, որոնք էլ հնարավորություն կտան ծավալելու ինքնուրույն ուսումնական գործունեություն՝ անաչառ գնահատելով սեփական ուժերն ու կարողությունները: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը լավ ճանաչի իր աշակերտներին: Նա պետք է անհատական մոտեցմամբ նպաստի նրանց զարգացմանը, բացահայտելով նրանց ամբողջ ներուժը և համապատասխանաբար յուրաքնաչյուրի համար ապահովի մտավոր ակտիվության դաշտ:

Ուսուցիչն ինքը պետք է ընտրի աշակերտին հանձնարարվող առաջադրանքները՝ ելնելով վերջիններիս անահատական առանձնահատկություններից:

Իրենց ուժին համապատասխան տրված առաջադրանքների կատարման արդյունքում սովորողներն աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն աշխատելու, մտորելու, եզրահանգումներ կատարելու և ձեռք բերված տեղեկատվությունը երևակայության ուժով հարստացնելու կարողություններ:

Գրականություն

1. Աշոտ Տեր-Գրիգորյան Հայոց լեզվի մեթոդիկա
2. Կարինե Չիբուխչյան Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում
3. Նախաշավիղ N 3 2013թ.
4. Սերոբ Խաչատրյան Կամուրջնենր պատերի փոխարեն
5. Լուսիեն Բառնակյան Ես ուսուցչուհի եմ